ISSN 2579-2504

ԱՐԴԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

MODERN PSYCHOLOGY SCIENTIFIC BULLETIN

АКТУАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ НАУЧНЫЙ ВЕСТНИК



ԵՐԵՎԱՆ 2017, 1

ԱՐԴԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(«ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»
VI ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ)

АКТУАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ

(«АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ТЕОРЕТИЧЕСКОЙ И ПРИКЛАДНОЙ ПСИХОЛОГИИ»
МАТЕРИАЛЫ VI МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ

MODERN PSYCHOLOGY

(«THE CURRENT ISSUES IN THEORETICAL AND APPLIED PSYCHOLOGY»
VI INTERNATIONAL CONFERENCE PROCEEDING)

ԵՐԵՎԱՆ 2017

Հրատարակվում է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ավանեսյան Հ. Մ. Գլխավոր խմբագիր, հ.գ.դ., պրոֆեսոր,

Բերբերյան Ա. Ս. – հ.գ.դ., պրոֆեսոր,
Մարգարյան Վ. Հ. –հ.գ.դ., դոցենտ,
Աղուզումցյան Ռ. Վ. – հ.գ.թ., պրոֆեսոր,
Նաղդյան Ռ. Մ. – հ.գ.դ., պրոֆեսոր,
Բաղդասարյան Ա. Ս. – փ.գ.թ., դոցենտ,
Հարությունյան Ս. Ֆ. – հ.գ.դ., պրոֆեսոր,
Գրիգորյան Վ. Հ. – կ.գ.դ., պրոֆեսոր,
Խաչատրյան Ն. Գ. – հ.գ.թ., դոցենտ,
Գասպարյան Խ. Վ. – հ.գ.թ., դոցենտ,
Բաբայան Հ. Ա. – հ.գ.թ., պրոֆեսոր,
Լոքյան Ա. Բ. – հ.գ.դ., դոցենտ,
Պապոյան Վ.Ռ. – հ.գ.թ., դոցենտ,
Հովհաննիսյան Ս. Վ. – մ.գ.թ., դոցենտ,
Ասրիյան Է. Վ. – հ.գ.թ., դոցենտ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Իմեդաձե Ի.Վ. հ.գ.դ., Վրաստանի ԳԱԱ թղթակից անդամ, Թիֆլիս, Վրաստան
Բասկո Լ. մանկավարժության դոկտոր, Ավինյոնի համալսարան, Ավինյոն, Ֆրանսիա
Ալախվերդով Վ.Մ. — հ.գ.դ., պրոֆեսոր, Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան, Ռուսաստան
Ենիկոլոպով Ս.Ն. հ.գ.թ., դոցենտ, Մոսկվայի պետական հոգեբանա-մանկավարժական համալսարան, Ռուսաստան
Կարագաշյան Մ.Հ. հոգեբանության դոկտոր, Մորգանվիլ, Նյու-Ջերսի, ԱՄՆ
Ալեքսանյան Հ.Գ. հոգեբանության դոկտոր, Տրանս-Միշն ասոցիացիա,Ֆրանսիա
Օբոզնով Ա. Ա. — հ.գ.դ., պրոֆեսոր, ԳՌԱ Հոգեբանական ինստիտուտ, Ինժեներական հոգեբանության լաբորատորիա
Ասբեդ Արյան հոգեբանության դոկտոր, Բուենոս-Այրեսի համալսարան, Արգենտինա
Ակոպով Գ.Վ. — հ.գ.դ., պրոֆեսոր, Սամարայի պետական սոցիալ-մանկավարժական համալսարան, Սամարա, Ռուսաստան

Avanesyan H. M. Chairman of the International Conference, Doctor of Psychology, Prof., Head of Chair of General Psychology, YSU, Yerevan
Berberyan A. S. Doctor of Psychology, Prof., Head of Chair of Psychology, RAU (Slavonic), Yerevan
Margaryan V. H. -Doctor of Psychology, National Institute of Strategic Studies MOD RA, Yerevan
Aghuzumtsyan R.V. PhD, prof., Dep. of Psychology of Management of PAA RA, Yerevan
Naghdyan R.M. - Doctor of Psychology, Prof.,
Baghdasaryan A.S. Doctor of Philosophy, ass. prof., Dean of Faculty of Philosophy and Psychology, YSU, Yerevan
Harutyunyan S. F. Doctor of Psychology, Professor Chair of Personality Psychology, YSU, Yerevan
Grigoryan V. H. Doctor of Biology, Prof. of Dep. of human and animal physiology, YSU, Yerevan
Khachatryan N. G. PhD., ass.prof., Head of Chair of Personality Psychology, YSU, Yerevan
Gasparyan Kh.V. PhD., ass.prof., Head of Department of Medical Psychology, YSMU after M.Heratsi.
Babayan H. A. PhD., Prof., Head of Chair of Psychology and Pedagogy, ASIPhC, Yerevan
Lokyan A. B. Doctor of Psychology, ass. prof., Rector of Public Administration Academy of RA
Papoyan V. R. PhD., ass.prof., YSU
Hovhannisyan S. V. PhD., ass.prof., YSU
Asriyan E. V. PhD., ass.prof., YSU

INTERNATIONAL COMMITTEE

Imedadze I. V. Doctor of Psychology, Prof., Corresponding Member of Georgian NAS, Tbilisi, Georgia
Basco L. Doctor of Pedagogy, Universite d'Avignon et des Pays de Vaucluse, Avignon, France
Allakhverdov V. M. Doctor of Psychology, prof., SPSU, Saint-Petersburg, Russia
Yenikolopov S. N. PhD., ass.prof., Moscow University of Psychology and Pedagogy, the Mental Health Research Center, RAMS, Moscow, Russia
Karakashian M.H. Doctor of Psychology, Morganville, NJ, USA
Alexanian H. Doctor of Psychology, Association Trans-Missions, Issy les Moulineaux, France
Oboznov A. A. Doctor of Psychology, prof., Institute of Psychology RAS, Russia
Asbed Aryan Doctor of Psychology, prof., University of Buenos-Aires, Argentina
Akopov G.V. Doctor of Psychology, Samara State Academy of Social Sciences and Humanities, Samara, Russia

Редакционный комитет
Аванесян Г.М.. Председатель оргкомитета, д.п.н., профессор

Берберян А.С. -д.пс.н., профессор,
Маргарян В.Г. – д.пс.н., доцент,
Агузумцян Р.В.– к.пс.н., профессор,
Нагдян Р.М. – д.пс.н., профессор,,
Багдасарян А.С.– к.ф.н., доцент,
Арутюнян С.Ф.— д.пс.н., профессор,
Григорян В.Г. д.б.н, профессор,
Хачатрян Н.Г.– к.пс.н., доцент,
Гаспарян Х.В.– к.пс.н., профессор,
Бабаян А.А. – к.пс.н., профессор,
Локян А.Б. – д.пс.н., доцент,
Папоян В.Р. к.пс.н., доцент,
Оганесян С.В. – к.п.н., доцент,
Асриян Э. В. – к.пс.н., доцент.

Международный научный комитет

Имедадзе И.В. д.пс.н., член-корреспондент Национальной АН Грузии, Тбилиси, Грузия
Баско Л. доктор педагогических наук, Авиньонский университет, Авиньон, Франция
Аллахвердов В.М. д. пс.н., профессор, Санкт-Петербургский государственный университет, Санкт-Петербург, Россия
Ениколопов С. Н.,– к.пс.н., доцент,
Московский государственный психолого-педагогический университет, Москва, Россия
Карагашян М. Г., – д.пс.н, Морганвилль, Нью Джерси, США
Алексанян Г.Г. д.пс.н., Ассоциация "Транс-Миссия", Исси-ле-Мулино, Франция
Обознов А.А.,– д. пс.н., профессор, Институт психологии РАН, Лаборатория инженерной психологии и эргономики, Москва, Россия
Асбед Арян- д.пс.н, Университет Буэнос-Айреса, Аргентина
Акопов Г.В. – д. пс.н., профессор, Самарский государственный социально-педагогический университет, Самара, Россия

ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆԱԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Եփրեմյան Լ. Կ. (ԵՊԿ, Երևան, Հայաստան)
mikaelterlemez@gmail.com

Հոդվածում ներկայացվում է Հայոց ցեղասպանության սերնդե-սերունդ փոխանցվող խեղման խնդիրը հոգեվերլուծական մի շարք մոտեցումների դիտանկյունից: Կոնկրետ օրինակների վրա նկարագրվում են ժառանգների վրա ցեղասպանված նախնիների զորեղ ազդեցության դրսևորումները: Փորձ է արվում Ն. Աբրահամի և Մ. Թորոքի «ուրվականի» և «դամբարանի» հասկացությունները կիրառել քննարկվող թեմայի համատեքստում՝ Սողոմոն Թեյլերյանի, Վիլյամ Սարոյանի, Էդուարդ Իսաբեկյանի, Հրանտ Դինքի օրինակով: Նշվում է նաև, որ ցեղասպանության այսպես կոչված «ուրվականները» հանգիստ չեն տալիս նաև դահիճների ժառանգներին:

Հանգուցային բառեր՝ ցեղասպանագիտություն, հոգեվերլուծություն, տրանսգեներացիոն խեղում, «ուրվական», «դամբարան»:

Թեև Հայաստանում վերջին տասնամյակներին Հայոց ցեղասպանությունը դարձավ գիտական վերլուծության առավել ուսումնասիրվող երևույթներից մեկը, սակայն այն դիտարկվեց գլխավորապես պատմագիտական ընդունված մոտեցումների ներքո: Ավելին՝ ստեղծվեց մի իրավիճակ, երբ այդ ոլորտը գրեթե մոնոպոլիզացրած պատմաբանները հանդես եկան որպես փորձագետներ բոլորովին այլ գիտության՝ հոգեբանության խիստ մասնագիտական հարցերում: Դրա հետևանքով սակավ ուսումնասիրված թեմաներից մեկը՝ տրանսգեներացիոն (սերնդե-սերունդ փոխանցվող) խեղման այնպիսի դրսևորումները, որոնք կապված են ցեղասպանության զոհերի ժառանգների վրա մեկ դար անց նախնիների իրական հզոր հոգեբանական ազդեցության հետ, ընկալվեցին որպես միստիկ, էզոտերիկ տարր, ցնդաբանություն վերջապես և կրճատվեցին իմ գիտական տեքստերից:

Սակայն հոգեվերլուծական մոտեցումները այս խնդրին միանգամայն այլ են. տրանսգեներացիոն խեղման ուսումնասիրություններում կիրառելի հոգեվերլուծական տեսությունները նորովի են բացահայտում ցեղասպանության ժամանակակից արձագանքները, թույլ են տալիս խորքային կերպով հասկանալ զոհերի ժառանգների հոգեկերտվածքի առանձնահատկությունները և ունեն ոչ միայն մարդաբանական իմանաստ՝ ցեղասպանության ընդունման և հատուցման գործընթացում կարող են ձեռք բերել նույնիսկ ստրատեգիական նշանակություն:

Միևնույն ժամանակ, տրավմայի սերնդե-սերունդ փոխանցման կենսաբանական ճանապարհները դեռևս լիովին բացահայտված չեն, դրանք գտնվում են նախնական ուսումնասիրման փուլում: Այդ թեմայի շուրջ մի շարք հոդվածներ է հրատարակել նաև տողերիս հեղինակը [1;7;9;10]:

Ի դեպ նկատենք, որ հենց պատմագիտական մեթոդաբանության մեջ այլ գիտությունների (իրավաբանության, աստվածաբանության, մշակութաբանության, հոգեբանության) ազդեցության հետևանքով այժմ վերանայվում են որոշ մոտեցումներ: Մասնավորապես, 2011 թվականի ապրիլին Ֆրայբուրգ քաղաքում տեղի ունեցած «Ժամանակի տարանջատում. Անցյալի, ներկայի և ապագայի սահմանների ուրվագծում» թեմայով միջազգային կոնֆերանսում ընդգծվեց, որ «անցյալի» հայեցակարգը չպետք է դիտարկվի բացառապես դասական պատմագրության տեսանկյունից՝ որպես անցյալից ներկա միակողմանի հոսող ժամանակի արտահայտություն: Բարբեր Բեվերնաժը ձևակերպեց «հակադարձ հոսող ժամանակի» հայեցակարգը, որն առանձնացնում է զոհերի հիշողության հատուկ տեսակ՝ այսպես կոչված «հետապնդող անցյալի» նշանակությամբ: Նույն կոնֆերանսում Քրիս Լորենցը առաջարկեց «տաք անցյալ» տերմինը, պնդելով, որ տրավմատիկ հիշողությունը չի կարող ինքնաբերաբար սառչել, «անցնել», ավելին՝ այն այսօր նորանոր պահանջներ է ներկայացնում վերապրածների ժառանգներին [6]:

Հայտնի չէ, թե արդյոք Զիգմունդ Ֆրոյդը տեղեկություն ուներ դարասկզբին Արևմտյան Հայաստանում ծավալվող ողբերգական դեպքերի մասին, բայց Առաջին համաշխարհային պատերազմի վերջում նա առաջ քաշեց այսպես կոչված «տագնապալի տարօրինակության» (Das Unheimlich, тревожащая странность) գաղափարը, որը բնութագրվում է որպես «անսպասելի վերադարձ այն տարրերի, որոնք վաղուց ի վեր պետք է հաղթահարված կամ ջնջված լինեին ժամանակակից մարդու միջից, որոնք հասել են մեզ նախնադարյան մարդու ինքնազգացողությունից: Դրանք արխայիկ երևույթների կամ սարսափ, զզվանք, տագնապ և վախ հարուցելու հետևանքով դուրս մղված տարրերի վերադարձն են որպես արդեն ժամանակակից իրողության արդյունք», գրում է Ֆրոյդը [15, էջ 219-220]:

Ֆրոյդի բացահայտումներին հետևելով՝ մի շարք գիտնականներ խոսում են արտամղման և չվերբալիզացված գաղտնիքի տրանսգեներացիոն փոխանցման մասին [13]: Այն գաղտնիքի, որի մասին երեխաների հետ չեն խոսում, որովհետև «վեզվով չի պատմվիլ» եղածը, սակայն այդ իրողությունը դեռևս կարելի է պատկերացնել զգայական մակարդակով, և այն անգիտակցաբար փոխանցվում է երկրորդ սերնդին: Երրորդ սերունդը, սակայն, այդ գաղտնիքի մասին ոչ միայն չի խոսում, այլ նույնիսկ պատկերացնել դա չի կարող: Եվ փոխանակ ընդհանրապես մոռացվելու, դուրս մղված իրողությունը վերադառնում է ուրվականի, դեմոնիկ ոգու նշանակությամբ, որն անբացատրելի սիմպտոմներով անընդհատ ապացուցում է իր անկանխատեսելի գոյությունը:

1978 թվականին երկու հոգեվերլուծողներ՝ փարիզաբնակ հունգարացիներ Նիկոլա Աբրահամը և Մարիա Թորոքը իրենց կլինիկական ուսումնասիրությունների հիման վրա հրատարակեցին «Կծեպը և միջուկը» հոդվածների ժողովածուն [14], ուր առաջարկեցին «ուրվականի» և «դամբարանի» հասկացությունները: Հեղինակները նկարագրում են այնպիսի հոգեվիճակ, երբ պացիենտների կյանքում ասես գոյություն ունենար ակտիվ ուրվական, որը խոսում էր և նույնիսկ գործում էր իրենց անունից: Հոգեբանական իմաստով այդ ուրվականը, հնարավոր է, այն մեկն է, որը, պացիենտի ընկալմամբ, դուրս է եկել «վատ փակված» իր գերեզմանափոսից, քանի որ նրան այնպիսի մահ է բաժին ընկել, որը դժվար կամ անհնարին է ընդունել: Տպավորություն է ստեղծվում, որ «վատ

կերպով թաղված» դիակները հանգիստ չեն թողնում իրենց ժառանգներին, պատկերավոր ասած «տեղաշարժ են անում» տապանաքարերը և տեղափոխվում «դամբարան», որն անգիտակցաբար իր մարմնում կրում է իրենց ժառանգներից որևէ մեկը կամ շատերը, և ժամանակ առ ժամանակ դուրս են գալիս այնտեղից՝ հիշեցնելով իրենց իրական գոյության մասին:

Եղեռնի զոհերի մինչ օրս հողին չհանձված, ինչպես նաև գերեզմանափոսերում ամփոփված մարմինները, իրոք, հատկություն ունեն իրենց համար «դամբարան» ընտրելու և վերապրածների ժառանգների վրա որոշակի ազդեցություն գործելու: Սակայն ոչ միայն վերապրածների՝ողջ հայ ժողովրդի վրա: 2015 ապրիլի 24-ին՝ Ցեղասպանության 100-րդ տարելիցին, Հայ Առաքելական եկեղեցին սրբացրեց Եղեռնի զոհերին որպես քրիստոնյա նահատակներ: Մեկուկես միլիոն մարդ միանգամից սրբացվեց. այս աննախադեպ քայլով, որ երբևիցե չէր կատարվել պատմության մեջ, եկեղեցին ընդգծեց այն փաստը, որ Աղետի զոհերն իրական ուժ են ազգի հետագա զարգացման ճանապարհին, որն պարտավոր է շարունակել իրենց ընդհատված ուղին: «Մեծ ուրախութիւն, երեւոյթ մը եղաւ ինձի համար եկեղեցւոյ որոշումը, որ մեր նահատակները հաւաքաբար սրբացուեցան իբր քրիստոնեայ նահատակներ, ասաց հայտնի գիտնական և հոգևորական Հայր Լևոն Զեքյանը:

Նաեւ այս յոյսը գրեթէ չքացած էր մէջս՝ վարանումներ, առարկութիւններ, դիմադրութիւններ կլսէի: [...] Կկարծեմ, որ Աստծոյ նախախնամութիւնն է մէկն է այս որոշումը:

Իսկապէս ասիկա մեզի վրաահաւոր պատասխանատուութիւնմըն է. մենք ի՞նչ աստիճան այդ երանելի նահատակներուն զաւակներն ենք: Հայաստան կամ ի Սիյուռս աշխարհի այդ մարդոց օրինակը մեզի վրա ահաւոր պատասխանատուութեան ծանրութիւն է» [3]:

Հայտնի է «արյունը ջուր չի դառնա» ասացվածքը, սակայն դեռևս XIX դարում ֆրանսիացի հոգեբան Թ. Ռիբոն տրավմատիկ հիշողության ֆենոմենը ջրի օրինակով է բացատրել: Որոշ գիտնականներ, նշում է Ռիբոն, մարդու ներվային համակարգը որպես սովորական հաղորդիչ են դիտարկում, որի նյութը՝ բազմիցս գոգավելով արտաքին ազդեցության տակ, փոխում է իր մոլեկուլների դիրքը: Ուժգին ազդեցությունը չի կարող աննկատ անցնել, այն հետք է թողնում մարդու էմոցիոնալ հիշողության վրա: Հետևավար, գտնում է Ռիբոն, հիշողությունը կենսաբանական երևույթ է [11, էջ 15-16]: Այսպիսով, զգացմունքների հիմքը հանդիսացող աֆեկտիվ հիշողությունն անձի ամենաէական մասն է կազմում: Հենց «զգացմունքները մարդու ամենախորը, ամենաառեղծվածային, անորսալի և ամենակենսական մասն են կազմում: Այն դեպքում, երբ մեր բոլոր գիտելիքները ձեռքբերովի են և, այսպես ասած, մեզանից դուրս են, մեր զգացմունքները ծնված են մեզ հետ: Մեր ներքին օրգանները, մեր ոսկորները, մկանները՝ մեր մարմնի փոքրագույն մասնիկն անգամ նպաստում է մեր զգացողությունների գոյացմանը: Մեր զգացմունքները հենց մենք ենք, ինչպես որ կանք՝ դա մեր էությունն է» [11, էջ 21]:

«Ուրվականի» և «դամբարանի» հասկացությունները, փաստորեն, գալիս են շարունակելու Ռիբոյի միտքը էմոցիոնալ, զգայական հիշողության մասին, որի հետ ժառանգն արդեն ծնվում է՝ իր մարմնում կրելով նախնիների արյան ձայնը, կոչը:

Օրինակները բազմաթիվ են: Հիշենք թեկուզ Էդուարդ Իսաբեկյանի «Իգդիր» ինքնակենսագրական վեպը [2], որի հերոսները գիշերներով նկարչին պարբերաբար այցելող ուրվականներն էին: Իսաբեկյանը, ասես, իր մեջ էր կրում բազմաթիվ իգդիրցիների ոգիները, որոնք 5 տարեկան հասակում Իգդի-

ից հեռացած նկարչին հանգիստ չէին տալիս իրենց ներկայությամբ ու հայրենի Սուրմալուն չմոռանալու պարտադրանքով:

Մեծ հայ Վիլյամ Սարոյանը իր վաղուց մահացած հորն ուղղված նամակում գրել է. «Ես ման էի գալիս աշխարհով որպես ուրույն անձնավորություն, բարձրախոս և արագաշարժ, այնպես որ հասարակական վայրերում անծանոթ մարդիկ քաշվում էին զարմանքով և երբեմն նաև վախեցած, ասես ես ինքս բարձրախոս և ծիծաղկոտ **մեկ մարդուց ավելին էի**» (ընդգծումը՝ Լ.Ե.) [5, էջ 321]:

Մեջբերված գրական ստեղծագործությունները միաժամանակ հեղինակների՝ Եղեռնի զոհերի ժառանգների խոսուն վկայություններն են, այսինքն՝ հոգեվերլուծական ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող ազգի ընտրյալների հոգեվիճակի առավել վառ նկարագրություններն են: Գրողի այսպես կոչված «երևակայական» աշխարհը տվյալ դեպքում չի կարող հիմք հանդիսանալ ներկայացված իրողությունը մտածածին, ոչ իրական հայտարարելու համար, քանի որ հոգեբանի համար պացիենտի հուզական աշխարհն ամենաիրական ուսումնասիրման օբյեկտն է՝ իր բոլոր դրսևորումներով և սիմպտոմներով:

Սողոմոն Թեյլերյանի դատավարության ընթացքում իրավապաշտպանների կողմից բարձրաձայնված Սողոմոնի մոր ուրվականի ազդեցությունը որդու մտադրությունների և գործողությունների վրա [8] նույն շարքից է: Այս օրինակի հետ կապված կառանձնացնեի կենսաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ պրոֆեսոր, տողերիս գիտական ղեկավար Վիլենա Հրանտի Գրիգորյանի դասախոսության ժամանակ հայտնված տեսակետը, ըստ որի ծնողի անժամանակ մահվան դեպքում նրա կյանքի չիրականացած, չավարտված գենետիկ ծրագիրը կարող է փոխանցվել ժառանգներին՝ վերաձևակերպելով, նորովի ծրագրավորելով ժառանգի կյանքի հետագա ընթացքը:

Ցցուն մի օրինակ է նկարագրված հոգեթերապեվտ Սյուզան Սարգսյանի կողմից, ով կրկնվող տագնապալի երազների թեմայով խմբակային հոգեթերապեվտիկ աշխատանք է անցկացրել [4, 55-56]: 26 տարեկան մի կին նկարել է վեց տարեկանից իրեն հետապնդող երազի պատկերը, որի մասին որևիցե մեկին չի պատմել: Երազի բովանդակությունը հետևյալն է. հենց վեց տարեկան հասակում նա սենյակի հատակին պառկած՝ սուտմեռուկ է ձևանում, որպեսզի դռան մոտ կանգնած տղամարդիկ իրեն չնկատեն և հեռանան: Աղջնակը՝ սարսափած, շունչը պահած, չի տեսել, բայց գիտի, որ այդ երկուսը կողքի սենյակում սպանել են իր հարազատներին: Երազը պատմելիս պացիենտը կարծես խեղդվում է: Փորձելով բացատրել, ռացիոնալիզացնել տեսածը, նա կապում է այն փոքր տարիքում մի իրավիճակի հետ, երբ բակ իջնելիս աշխատում էր մուտքի դռան մոտից աննկատ անցնել՝ խուսափելով այնտեղ կանգնած մեծ տղաների ծաղրից և տհաճ խոսքերից: Նույն օրը ընթրիքի սեղանի շուրջ մայրիկին պատմում է օրվա անցուդարձի, նաև իր հետ հոգեվերլուծական աշխատանքի մասին՝ առաջին անգամ խոստովանելով իրեն հետապնդող երազի գաղտնիքը: Պատմելու ընթացում մոր զարմացած դեմքը մի տեսակ ձգվում է, իսկ ձեռքը քարանում օդում: Պարզվում է, որ պացիենտի մոր տատիկը Եղեռնից հրաշքով փրկվածներից է: Նրա ողջ ընտանիքը զոհ է գնացել երկու թուրք ոճրագործների սրին, իսկ վեցամյա աղջնակը՝ սենյակի մի անկյունում հատակին պառկած՝ մեռած է ձևացել և այդպես փրկվել է: Տրավման այնքան մեծ է եղել, որ ընտանիքում դրա մասին երբեք չի խոսվել, մայրը իր աղջկան երբեք նույնիսկ ակնարկ չի արել այս պատմության մասին, միայն ընդհանուր առմամբ տեղեկացնելով, որ նախնիները Արևմտյան Հայաստանից են և Եղեռնի ականատես:

Հայոց ցեղասպանության զոհերի այսօրինակ «վերադարձը» հանգիստ չի տալիս ոչ միայն հայորդիներին: «Տագնապալի տարօրինակության» հոգեվիճակը մեծ սրությամբ դրսևորվում է ցեղասպանությունն իրագործած հանցագործ-

ների ժառանգների ինքնազգացողության մեջ: Սակայն եթե Եղեռնի զոհերի դեպքում մենք խոսում ենք *խեղման* տրանսգեներացիոն փոխանցման մասին, ապա դահիճների պարագայում փոխանցվող զգացողությունը տրավմա չենք կարող անվանել: Միաժամանակ, թեև այսօր թուրքական հասարակության բազմաթիվ նեվրոտիկ դրսևորումների ականատեսն ենք, այդ երևույթի համար հստակ բնորոշում դեռևս գտնել չենք կարողանում:

«Նրան այնպիսի մահ է բաժին ընկել, որը դժվար կամ անհնարին է ընդունել», այս խոսքերը բնորոշում են մեծ հայ Հրանտ Դինքի դաժան սպանությունը, սակայն նա իր մահով արեց ավելին, քան նույնիսկ իր ողջ կյանքով, ակտիվ գործունեությամբ, որի նշանակությունը դժվար է գերահնահատել: Նա ուրվականի պես ներխուժեց ժամանակակից Թուրքիայի հասարակության շերտերը, այսպես կոչված «դամբարան» ընտրելով ոչ թե մեկ ժառանգի մարմինը, այլ թուրքական հասարակության զգալի զանգվածը: «Մենք բոլորս Հրանտ Դինք ենք» պաստառները հենց նույն երևույթի վառ նկարագիրն են՝ մարդկանց հոծ բազմությունը խոսում և գործում էր հենց իր անունից:

Ստացվում է, որ անընդունելի մահը, որը հետևանք է այնպիսի անմարդկային իրողության, ինչպիսին Հայոց ցեղասպանությունն է, կարող է ակտիվ գործոն դառնալ ցեղասպանության արյան վրա ստեղծված այսօրվա Թուրքիայի հիմքերի խարխլման համար: Չ՞է որ այս դեպքում իրադրությունն անկանխատեսելի է, դրանից փախչելը, թաքնվելը անհնարին է դառնում՝ սա իսկական մղձավանջ է: Ֆրոյդը ուսումնասիրել է մարդասպանի մեղանչական հատուկ գործողությունները Բոռնեոյի վայրի ցեղերի օրինակով, որոնք իրենց նախկին թշնամիներին հետմահու ընկեր, պահապան, պաշտպան դարձնելու անհրաժեշտություն են զգում: Դա մարդասպանի կենդանական վախի դրսևորում է, զոհի «ուրվականի» վերադարձից խուսափելու փորձ, որը կարող է կործանել ոչ միայն հանցագործին, այլև իր ժառանգներին և ողջ ցեղը, ողջ հասարակությունը [12, էջ 405]:

Հայկական պահանջատիրական մոտեցումը, որը շատերը անիրական են համարում, հոգեվերլուծական տեսանկյունից նոր իմաստ է ստանում՝ չտեղավորվելով ռացիոնալիզմի կամ պրագմատիզմի նեղ սահմաններում: Մեր հողի կանչը հազարամյակներով Էրգրի էկոհամակարգի մաս կազմող մեր նախնիների կանչն է, և այն չի լռելու: Եթե նույնիսկ՝ ելնելով քաղաքական նկատառումներից, հայ ժողովուրդն ընդմիշտ հրաժարվի թուրքական պետության հանդեպ որևէ պահանջատիրությունից, դա խորքային մակարդակով ոչ միայն չի վերացնի «պահարաններում պահված դիակների» հանդեպ թուրքական հասարակության անհուն սարսափը, այլ ցեղասպան պետությանը նոր, անբուժելի հիվանդության երանգներ կհաղորդի՝ ի վերջո հանգեցնելով դրա կործանմանը:

Գրականություն

1. **Եփրեմյան Լ.** «Հայկական տաբուն» Թուրքիայում. Հոգեվերլուծական դիտարկման փորձ: // //«21- րդ դար», Նորավանք, Եր., 2013, «Գասպրինտ», #3, 150 էջ, էջ 111-132:
2. **Իսաբեկյան Է.** Իգդիր. Եր., 2-րդ հրատ., «Զանգակ-97», 2009, 270 էջ:
3. **Ջէքիեան Լ.** «Մեծ Եղեռնի հարիւրամեակ՝ յիշողութիւն եւ մարտահրաւէր», 28 ապրիլի 2014 թ. // Հայաստանի Ամերիկեան համալսարանի հայ մատենագրության թուանշային գրադարան, https://www.youtube.com/watch?v=BQtouoPf704:
4. **Սարգսյան Ս.** Տրանսգեներացիոն կապերի ֆենոմենը: // «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 142.4, 2014(№ 1), էջ 55-60:
5. 5. **Սարոյան Վ.** Նամակ Բիթլիսցի Արմենակին // Սարոյան Վ. Պատմվածքներ, հարցազրույցներ, էսսեներ, հուշեր, Եր., 1999, 432 էջ:**Ассман А.** «Распалась связь

времен? Взлет и падение темпорального режима модерна». М., изд-во Новое литературное обозрение (НЛО), 2017. Цитируется по: Непрошедшее прошлое: почему исторические травмы подрывают доверие к будущему.
6. Теории и практики, 5 мая 2017 https://theoryandpractice.ru/posts/16023-neproshedshee-proshloe-pochemu-istoricheskie-travmy-podryvayut-doverie-k-budushchemu
7. Виноваты ли мы, или «Усвоенная беспомощность» как гибель «внутреннего агента». // «21-й век», Нораванк, Ер., «Гаспринт», 2012, #4, 154 с., с. 39-56.
8. Геноцид армян перед судом. Судебный процесс Талаата Паши: стенографический отчет, под редакцией **С. Степаняна**. М., «Феникс», 1992, 269 с.
9. **Епремян Л.** Маргинальность как судьба (к проблеме трансгенерационной травмы геноцида армян). // Материалы IY Международной научной конференции «Современные проблемы теоретической и прикладной психологии», ЕГУ, Факультет философии у психологии, Ер., 25-27 октября, изд-во «Эдит Принт», 2013, 455 с., с.264-266.
10. **Епремян Л.** Арам Хачатурян. Маргинальность как судьба. //«Արամ Խաչատրյանը և արդի աշխարհը», Եր., «Ամրոց գրուպ», 2014, 240 էջ , էջ 101-110;
11. **Рибо Т.** Память в ее нормальном и болезненном состояниях. СПб, 1894, 224 с.
12. **Фрейд З.** Тотем и табу. // Зигмунд Фрейд. Я и Оно. М.-Харьков, «ЭКСМО-Пресс» «Фолио» (Антология мысли), *1998*, 1040 с.
13. **Шутценбергер А.** Синдром предков. Изд-во Института Психотерапии, М., 2001, 240 с.
14. **Abraham Nicolas et Török Maria** (1978), L'ekorce et le Noyau, Paris, Aubier-Flammarion.[Définition de la cripte et du fantom in Notules]. Edit, révisée et complete 1987; trad, en amér. The Shell and the Kemell, U of Cicago Press, 1994.
15. **Freud, S.** The "Uncanny", S.E., XYII, London, Hogarth.

ПСИХОАНАЛИТИЧЕСКИЕ ТЕОРИИ В ГЕНОЦИДОВЕДЕНИИ

Епремян Л. К. (ЕГК, Ереван, Армения)

В статье рассматривается трансгенерационная травма Геноцида армян с позиций психоаналитических теорий. На конкретных примерах прослеживается мощное воздействие жертв на следующие поколения. В частности, с точки зрения теории *Николя Абрахама* и *Марии Тёрёк о* «склепе» и «призраке» сделана попытка представить судьбы Согомона Тейлеряна, Вильяма Сарояна, Эдуарда Исабекяна, Гранта Динка. Отмечается, что так называемые «призраки» преследуют не только наследников жертв, но и палачей.

Ключевые слова: геноцидоведение, психоанализ, трансгенерационная травма, «склеп», «призрак».

PSYCHOANALITICAL THEORY OF GENOCIDEOLOGY

Yepremyan L. K. (YSK, Yerevan, Armenia)

The article considers the possibility of the analysis of the transgenerational trauma of the Armenian Genocide from the posture of a number of psychoanalytical theories. In this aspect the theory of the French explorers of Hungarian origin, Nicolas Abraham and Maria Terek, appear to be fairly efficient. They put forward the ideas of the "tomb" and the "phantom", which attest the " badly buried stiffs" whose death is so unfair that settling in their descendants' souls the "phantoms" can really influence the current events many years after their death. Based on the example of Edward Isabekyan, William Saroyan, Soghomon Teyleryan, Hrant Dink, there has been shown

the mechanism of the coexistence of several generations in one person. However the "phantoms" May also affect the state of mind of the descendants of the *criminals who committed the Genocide.*

Keywords: genocideology, psychoanalysis, transgenerational trauma, «tomb», «phantom».